ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ




Հաստատվել է՝ համայնքի ավագանու

17 մարտի 2023թ. թիվ 29-Ն որոշմամբ

Բովանդակություն

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

2.2 Տեղական ինքնակառավարման մարմինները

2.3 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

2.4 Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հողային հաշվեկշիռը

2.5 Գյուղատնտեսություն

2.6 Համայնքում առկա անասնագլխաքանակի տվյալները ըստ առանձին բնակավայրերի

2.7 Կրթություն

2.8 Բնություն և շրջակա միջավայրի պահպանություն

2.9 Աղետների ռիսկերի կառավարում

3.Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը

3.1 Համայնքում իրականացվող ծրագրերը

3.2Համայնքի ուժեղ ու թույլ կողմերի , հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՍՀ) վերլուծություն

4.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

4.1 Համայնքի զարգացման տեսլական

4.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները

5.ՀԶՀԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը(մոնիթորինգը) և գնահատումը,

վերահսկումը, հաշվետվությունների կազմումը, վերանայումը

հզհծ-ի իրականացումը

6 .Եզրափակում

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը



Գյուլագարակ համայնքի հարգելի բնակիչներ, ավագանու ադամներ, համայնքապետարանի աշխատակազմ, ողջունում եմ Ձեզ և շնորհակալություն հայտնում համայնքի ֆինանսական , տնտեսական, սոցիալ-տնտեսական , նյութական և այլ ռեսուրսների քննարկմանը մասնակցելու և հետաքրքրություն ցուցաբերելու համար: Հաշվի առնելով Գյուլագարակ համայնքի յուրաքանչյուր բնակավայրի առանձնահատկություններն ու կարիքները՝ փորձելու ենք լուծում տալ խնդիրներին և ստեղծել բարեկեցիկ ու բարձրակարգ կենսապայմաններով ապահովված համայնք:

Գյուլագարակ համայնքում իրկանացվել են մի շարք կարևոր խնդիրներ՝ լուսավորություն, ջրագծերի նորոգում, մանկապարտեզների հիմնանորոգում և այլ կարևորագույն խնդիրներ:

Համայնքում իրականացվելիք ծրագրերից են ՝ համայնքային ճանապարհների նորոգումը, ջրագծերով ապահովումը, արևային էներգիայի կիրառումը , տարաբնույթ ծրագրերի ներգրավվման միջոցով աշխատատեղերի ստեղծումը, փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը և մի շարք այլ կարևոր նախաձեռնություններ :

Ուզում եմ շնորհակալություն հայտնել համայնքային ենթակայության բոլոր կառույցներին՝ համայնքի հզորացման գործում ունեցած մասնակցության համար:

Հզոր համայնք կառուցելու հնարարվորությունն այսօր մեր բոլորի ձեռքում է: Մենք միասին կարող ենք կերտել ապահով ու կայուն միջավայր:

Գյուղազարակ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են .

- Համայնքի արդյունավետ կառավարման նպատակով հատուկ ուշադրություն դարձնել կադրերի ընտրությանն ու աշխատանքների ճիշտ կազմակերպումը:
- Զարկ տալ տուրիզմի զարգացմանը
- Զարգացնել գյուղատնտեսությունը՝ ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա, իրականացնել բնապահպանական ծրագրեր:
- Ստեղծել նոր աշխատատեղեր
- Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունները ՝ ներգրավելով միջազգային դոնոր կազմակերպությունների: Նրանց ներգրավմամբ իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի զարգացմանը:
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները:

Համայնքի առկա հիմնախնդիրներն են՝

- Աշխատատեղերի բացակայությունը
- Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակը
- Ներհամայնքային , ներբնակավայրային ճանապարհների և փողոցների զգալի մասի անմխիթար վիճակը
- Գյուղատնտեսական տեխնիկայի սակավությունը
- Ոռոգման ջրի բացակայությունը
- Համայնքում մշակութային ենթակառուցվածքների անմխիթար վիճակը

<u>*Լուծման ուղիները.*</u>

- Հանրային մասնակցություն
- Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ
- Աշխատատեղերի ստեղծում
- Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում:

<u>*Ծրագրի մշակման , քննարկման և հաստատման գործընթացը*</u>

Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները , տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները:

Համայնքի հնգամյա ծրագրի կազմման աշխատանքներին մասնակցել են ՏԻՄ մարմինները, աշխատակազմը: Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հնգամյա ծրագրում ընդգրկվելիք հարցերը քննարկվել են հանրային լսումներում, որի ընթացքում հաշվի է առնվել յուրաքանչյուր առաջարկ և հնարավորության սահմաններում ընդգրկվել է հնգամյա զարգացման ծրագրի մեջ:

## 2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1 Աշխարհագրական դիրքը , պատմական համառոտ ակնարկ

Գյուլագարակ համայնք ՀՀ Լոռու մարզում: Ներառում է Գյուլագարակ, Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո և Վարդաբլուր գյուղերը: Համայնքը ստեղծվել է 2017 թվականի հունիսի 9 -ին ՀՀ Ազգային Ժողովում համայնքների խոշորացման օրինագծով: Կենտրոնը Գյուլագարակ գյուղն է: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունները կայացել են 2017 թվականի նոյեմբերի 5-ին:

Աղյուսակ 1.Համայնքի բնակավայրերի վարչական տարածքի , առկա և մշտական բնակչության , տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2023թվականի դրությամբ)

| հ/հ | Բնակավայրի անվանումը | Վարչական տարածքը (հա) | Առկա բնակչության թվաքանակը (մարդ) | Մշտական բնակչության թվաքանակը (մարդ) | Առկա տնտեսությունների քանակը | Մշտական տնտեսությունների քանակը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գյուլագարակ | 2450,93 | 2245 | 2139 | 496 | 655 |
| 2. | Կուրթան | 2092,83 | 1267 | 1410 | 383 | 491 |
| 3. | Վարդաբլուր | 2056,25 | 1327 | 1316 | 262 | 307 |
| 4. | Յոբարձի | 995,89 | 598 | 569 | 156 | 197 |
| 5. | Գարգառ | 3543,62 | 1367 | 1340 | 373 | 389 |
| 6. | Պուշկինո | 7450,38 | 265 | 222 | 118 | 219 |
| 7. | Ամրակից | 1382 | 426 | 394 | 130 | 180 |
| | ընդամենը | 19971.9 | 7495 | 7390 | 1918 | 2438 |

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին

# ԿՈՒՐԹԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ



Կուրթան գյուղը գտնվում է Հայաստանի հանրապետության հյուսիսային հատվածում:Այն տեղավորված է բարձր և հարթ սարավանդի վրա:Գյուղի ձախ մասից հոսում է ջրառատ Ձորագետը, որը հարյուր մետրից ավելի խոր կիրճ է առաջացրել, իսկ աջ կողմով հոսում է Գարգառ գետը:
Բարձրությունը ծովի մակարդակից 1260 -1270մ է: Կիրճերի զառիթափ կտրվածքներում երևում են մոխրակապտավուն բազալտի կարծր շերտերը, որոնցում կան մի շարք քարանձավներ:






Գյուղը Ստեփանավանից գտնվում է 18կմ հեռավորության, իսկ մարզկենտրոնից՝ 30կմ հեռավորության վրա:
Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ և մեղվաբուծությամբ:
Գյուղում և շրջակայքում պահպանվել են՝ խաչքարեր, մատուռներ, կամուրջներ և այլ շինության մնացորդներ:
Գյուղից արևելք՝ Կուրթանի ձորում, Ձորագետի աջ ափին է գտնվում Հնեվանքի համալիրը:

**Կուրթան գյուղում են գտնվում Սբ. Աստվածածին (VI դարեր),  և  «Գտեվանք» (VI-XVII դարեր), եկեղեցիները:**





# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ



Ստեփանավանի տարածաշրջանի նշանավոր գյուղերից է, ունի 1368 բնակիչ, 307 տնտեսություն: Գտնվում է Գարգառ գետի երկու ափերի ընդարձակ հարթություններում՝ ծովի մակարդակից 1320 մ բարձրության վրա: Վարդաբլուրի տեղում եղել է հին գյուղատեղի, որի մասին վկայում են գերեզմանաքարերի և շինությունների մնացորդները: Իսկ ներկայիս գյուղը ձևավորվել է 18-րդ դարի կեսերին, Մուշից և Սասունից գաղթածների շնորհիվ:

Գյուղի առաջացմանը նպաստող գործոններ են եղել լավագույն սնահողերով ընդարձակ հարթ տարածքները, կլիմայական բարենպաստ պայմանները, ջրով ապահովվածությունը:

Վարդաբլուրի տարածքում պահպանված են մի շարք մեծ ու փոքր ճարտարապետական կոթողներ, որոնց մի մասն ավերված է: Հայտնի է 6-րդ դարի կառույց Զգրաշենի եկեղեցին, Զաքարյանների օրոք հիմնված ամրոցը (10-11-րդ դարեր), Սուրբ Սարգիս







լեռան վրա լավ պահպանված Աշոտ Երկաթի բերդը, գերեզմանատներ ու խաչքարեր (11-19-րդ դարեր), երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշակոթող: Գյուղի հոգևոր կյանքում մեծ է Սբ. Աստվածածին եկեղեցու (1876թ.) դերը: Գյուղում ստեղծված են արհեստական լճակների համակարգ, ուր ամռանն այցելում են բազմաթիվ զբոսաշրջիկներ՝ հիանալու գյուղի չնաշխարհիկ բնությամբ:

# ՀՈԲԱՐՁԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ




Հոբարձի, գյուղ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում,Ստեփանավանից մոտ 8 կմ հարավ-արևելք:

Գյուղում պահպանվել է V - VI դարերի սրահավոր, միանավ թաղածածկ դահլիճ տիպի եկեղեցի: Բնակչության հիմնական զբաղմունքը այգեգործությունը, անասնապահությունն ու բանջարաբուծությունն է: Զբաղվում են նաև հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում եղել են զրույցներ իբրև եկեղեցին հունական պատկանելիություն ունի:Սակայն դա այնքան էլ այդպես չէ, քանի որ եկեղեցու բակում գտնվող և՛ գերեզմաններն են հայկական և՛ գյուղն է հայկական:Միակ բացատրությունը թե մարդկանց մոտ ինչու է թյուր կարծիք ստեղծվել, պատճառն այն է





որ 19-րդ դարում տարածաշրջանում հայտնի վարպետների խմբեր են եղել, որոնք վարձատրության դիմաց հայկական եկեղեցիներ են կառուցել, որպես օրինակ՝ Վարդաբլուրի Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցել են հույն վարպետներ, իսկ Հոբարձու եկեղեցին վերակառուցելիս խորանը իրենց ոճով են պատրաստել, առանց բեմը բարձրացնելու՝ գավիթի մակարդակի:

# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ



Գյուլագարակ, գյուղ Հայաստանի հյուսիսում գտնվող Լոռու մարզում՝ Ձորագետի Գարգառ վտակի ձախ ափին՝ ծովի մակարդակից 1400 մ բարձրության

վրա: 2017 թվականին վարչատարածքային բաժանման բարեփոխումների արդյունքում Գյուլագարակը միավորվել
է Ամրակից, Գարգառ, Կուրթան, Հոբարձի, Պուշկինո և Վարդաբլուր գյուղերի հետ՝ ձևավորելով համանուն խոշորացված համայնքը:

Գյուլագարակի ռելիեֆը նախալեռնային է, կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Այն բավական խոնավ է, տաք ու առողջարար, ինչով էլ պայմանավորված համարվում է ամառանոցային հիանալի վայր: Այստեղ են գտնվում Գյուլագարակի սոճու արգելավայրը, «Սոճուտ» մանկական առողջարանը և «Դենդրոպարկը», ինչը կարևոր նշանակություն ունի գյուղի զբոսաշրջային գրավչության համար:





Հայտնի է, որ Գյուլագարակ համայնքի այժմեական տարածքը բնակեցված է եղել նախքան 5-րդ դարը: Գյուղից 2 կմ հարավ գտնվում է Տորմակադուռ գյուղատեղին իր Տորմակ եկեղեցով (6-րդ դար), իսկ 2 կմ արևմուտք՝ 4-5-րդ դարերի Սուրբ Գևորգ մատուռը: Այնուամենայնիվ, գյուղը, որպես այդպիսին, հիմնադրվել է 1750 թվականին: Գյուղի պատմամշակութային ժառանգության մաս է կազմում նաև 19-րդ դարի վերջին հիմնված Գյուլագարակի եկեղեցին, որը խորհրդային ժամանակաշրջանում օգտագործվել է որպես հացահատկի պահեստ:





# ԳԱՐԳԱՌ ԲՆԱԿԱՎԱՅՐ



Գարգառը գտնվում է ծովի մակարդակից 1400-1500 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոն Վանաձորից կազմում է 26 կմ:

Գյուղի աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է, առաջին հերթին, հաղորդակցման տեսակետից, քանի որ նրա միջով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրուղին:

Համայնքի հողերն անջրդի են: Գյուղում հիմնականում զբաղվում են ցորենի, կարտոֆիլի, բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ:

Բնակավայրի շրջակայքում կա 6 խաչքար, մեկ եկեղեցի, 2 մատուռ, մեկ գերեզմանոց, զոհված զինվորներին նվիրված 2 հուշակոթող և 1 հուշաղբյուր՝ «Ալ. Պուշկինի հանդիպումը Ալ. Գրիբոյեդովի դիակառքին»:





# ՊՈՒՇԿԻՆՈ ԲՆԱԿԱՎԱՅՐ



**Պուշկինո** (նախկինում՝ *Գյառգյառ ռուսական*), գյուղ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում՝ Ստեփանավան քաղաքից մոտ 4 կմ հարավ-արևելք, Ձորագետի աջակողմյան Գարգառ վտակի ափին: Պուշկինո է վերանվանվել 1937 թ. փետրվարի 14-ին

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1450 մ, հեռավորությունը մարզկենտրոն Վանաձորից՝ 15 կմ հյուսիս-արևմուտք:





Պուշկինո համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, կարտոֆիլի, բանջարաբոստանային, ինչպես նաև կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղացիների մեծ մասը զբաղվում է անասնապահությամբ: Արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր[1]:

Պուշկինոն ներկայիս անունը ստացել է 1870 թվականին ռուս հանճարեղ գրող Ալեքսանդր Պուշկինի պատվին:

# ԱՄՐԱԿԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐ



Ամրակից (նախկինում՝ Նիկոլաևկա կամ Նովոնիկոլաևկա, Կիրով), գյուղ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում՝ Ստեփանավան քաղաքից 2 կմ արևելք։

Հեռավորությունը մարզկենտրոն Վանաձորից կազմում է 30 կմ։ Գյուղը հիմնադրվել է 1840-ական թթ. պատմական Ամրակ (Ամրակից) գյուղի տեղում[]։ Հիմնադրումից հետո կրել է Նիկոլաևկա կամ Նովոնիկոլաևկա անվանումները, 1938 թվականին վերանվանվել Կիրով, 1991 թվականին՝ Ամրակից։

Գյուղը գտնվում է Ձորագետի աջափնյակում՝ Բազումի լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջին՝ բլրապատ հարթավայրում՝ ծովի մակարդակից 1380 մ բարձրության վրա։
Գյուղում կա քարաշեն եկեղեցի։
2017 թվականին այն ներառվել է Գյուլագարակ խոշորացված համայնքի մեջ։ չնայած այստեղ ավելի հին պատմական կառույցներ կան, օրինակ՝ 13-րդ դարի եկեղեցիներ, 13-18-րդ դարերի գերեզմանոց, մ.թ.ա. 2-1 հազարամյակների դամբարանադաշտ,



ինչպես նաև միջնադարյան Ամրակ (Ամրակից) գյուղատեղին, որի անունն էլ կրում է ներկա բնակավայրը։

# ԺՈՂՈՎՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 2: Գյուլագարակ համայնքի ժողովրդագրության վերաբերյալ ցուցանիշներ 01.01.2023 թվականի դրությամբ

| **Տարիք** | **0-15** | **16-62** | **63-ից բարձր** |
|---|---|---|---|
| **Գյուլագարակ** | **508** | **1396** | **341** |
| **Կուրթան** | **280** | **820** | **222** |
| **Վարդաբլուր** | **221** | **909** | **197** |
| **Դղբարձի** | **126** | **354** | **118** |
| **Գարգառ** | **249** | **893** | **225** |
| **Ամրակից** | **88** | **253** | **85** |
| **Պուշկինո** | **78** | **145** | **42** |
| **ընդամենը** | **1550** | **4770** | **1230** |

## *2.2* ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով երաշխավորված իրավունքն ու համայնքի կարողությունն է:

Գյուլագարակ  համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացվնում է ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 15 անդամներով ։

## 2.3 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Գյուլագարակ համայնք ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ -ի միջոցով կազմակերպվում և իրականացվում է մաքրման և աղբահանության աշխատանքները:
Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորությանը: Բնակավայրերում լուսավորությունը կազմում է մոտ 60 % իսկ որոշ բնակավայրերում հասնում է 100%-ի : Համայնքի առաջնային և կարևորագույն հարցերից է ամբողջությամբ լուսավորել բոլոր բնակավայրերը:
Բնական գազի հասանելիությունը բնակչությանը կազմում է 95%:

Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը: Համայնքի հինգ բնակավայրերը ապահովված են շուրջօրյա ջրով , իսկ երկու բնակավայրերում ունենք շուրջօրյա ջրամատակարարման խնդիր:

Բոլոր բնակավայրերում առկա է գերեզմանատների ցանկապատման կամ եղած ցանկապատերի թարմացման խնդիր:

## 2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

Աղյուսակ 4. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հողային հաշվեկշիռ

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Վարելահողերի ընդհանուր չափը (հա) | Այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Խոտհարք ընդհանուր չափը (հա) | Արոտ ընդհանուր չափը (հա) | Այլ հողատեսք ընդհանուր չափը (հա) |
| 1. | Կուրթան | 760,92 | 119,73 | 277,60 | 295,71 |
| 2. | Վարդաբլուր | 819,98 | 146,67 | 250,13 | 167,50 |
| 3. | Հոբարձի | 302,37 | 75,17 | 316,73 | 54,35 |
| 4. | Գյուլագարակ | 894,26 | 188,33 | 432,91 | 142,39 |
| 5. | Գարգառ | 647,11 | 127,96 | 975,22 | 155,79 |
| 6. | Պուշկինո | 351,42 | 551,59 | 4455,20 | 494,65 |
| 7. | Ամրակից | 481,58 | 148,00 | 313,86 | 105,22 |
| | Ընդամենը՝ | 4257,64 | 1357,45 | 7021,65 | 1415,61 |

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 19975 հա է:

### 2.5 Գյուղատնտեսություն

Համայնքում զարգացած է բուսաբուծությունը և անասնապահությունը:

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Վերջին տարիներին փոքր չափով սկսել են մշակել նաև ոչ ավանդական մշակաբույսեր:

Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Գյուլագարակ համայնքի տնտեսական զարգացման կարևոր ոլորտ:

Այս երկու ոլորտները ունեն զարգանալու մեծ հնարավորություններ: Համայնքի բնակիչները զբաղվում են նաև խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, զարգացան միտում ունի մեղվաբուծությունը:Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում:

2.6ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

(01.01.2023թ. դրությամբ)

Աղյուսակ 5

| 1120 | Ցուցանիշները | Կուրթան | Վարդաբլուր | Հոբարձի | Գյուլագարակ | Գարգառ | Պուշկինո | Ամրակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝ | 875 | 653 | 432 | 716 | 406 | 468 | 369 |
| | Կովեր | 272 | 269 | 139 | 390 | 173 | 244 | 199 |
| 2. | Խոզերի գլխաքանակը | 524 | 469 | 309 | 74 | 26 | 58 | 76 |
| 3. | Ոչխարների և այծերի գլխաքանակը | 214 | 437 | 268 | 453 | 207 | - | 105 |
| 4. | Ավանակների գլխաքանակը | - | 1 | 1 | 1 | - | 1 | - |
| 5. | Ձիերի գլխաքանակը | 4 | 15 | 19 | 16 | 7 | 7 | 2 |
| 6. | Հավերի և այլ թռչունների գլխաքանակը | 2699 | 2815 | 1120 | 2322 | 692 | 217 | 893 |
| 7. | Մեղվաընտանիքների քանակը | 111 | 252 | 180 | 82 | 46 | 57 | 106 |

## 2.7 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուլագարակ համայնքում գործում են հանրակրթական միջնակարգ 7 դպրոցներ՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Կուրթանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Վարդաբլուրի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Հոբարձու միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Գարգառի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Պուշկինոյի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, որտեղ սովորում են 1001 աշակերտներ:

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում գործում են 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ , «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ , «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ , «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ , «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ , որտեղ հաճախում են 179 երեխաներ:

Աղյուսակ 6. ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՀ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

**(01.01.2023թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Կուրթան | Վարդաբլուր | Հոբարձի | Գյուլագարակ | Գարգառ | Պուշկինո | Ամրակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ընդհանուր աշակերտների քանակ | 207 | 135 | 64 | 339 | 160 | 44 | 52 |
| | Ավագ դպրոց հաճախող | 24 | 24 | 6 | 33 | 23 | - | 11 |
| 2. | Տարական դպրոց հաճախող | 84 | 40 | 26 | 131 | 60 | 17 | 17 |
| 3. | Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ սովորող | 14 | 1 | 2 | 13 | 12 | 4 | 8 |
| 4. | ԲՈՒՀ հաճախողներ | 19 | 33 | 6 | 17 | 10 | - | 4 |

## 2.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը, ոչ միայն կարևոր նախապայման է մարդու և բնության ներդաշնակ գոյակցության, այլև երաշխիք երկրի կայուն զարգացման համար:

Համայնքում շրջակա միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է անտառների պահպանությունը, կանաչապատ տարածքների ավելացումը,համայնքի սանմաքրումը:

Համայնքում բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները, կազմակերպել ծառատունկեր
- բարեկարգել զբոսայգիները
- կենցաղային աղբի տեսակավորված հավաքման համակարգի ստեղծում և աղբի տեսակավորման մշակույթի ստեղծում
- աղբահանության կազմակերպում տեսակավորման եղանակով
- Գետերի էկոհամակարգի վերականգնում
- Կազմակերպել շաբաթօրյակներ

Ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

## 2.9 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հայաստանը ենթակա է բազմաթիվ բնական և տեխնոլոգիական վտանգների և կարիք ունի ռիսկի կառավարման տեղեկատվության հավաքագրման և օգտագործման միասնական համակարգի, վտանգի աղետների ռիսկի կենտրոնացված տվյալների բազայի և ռիսկի քատեզավորման համակարգված, համապետական նախաձեռնության:

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ:

Գյուլագարակ համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքի ղեկավարը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացան գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: Բնակավայրերում եղած

թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Ըստ անհրաժեշտության թաքստոցները ակավելացվի բնակչության թվին համապատասխան:

Համայնքում խոշոր աղետների ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպումն իրականացվում է ԱՌԿ խորհրդի կողմից, որի տեղակայման մշտական վայրը համարվում է համայնքապետարանը: Համայնքապետարանից բնակչության պաշտպանության կառավարումն անհնար լինելու դեպքում, ԱՌԿ խորհրդի ղեկավարի (համայնքի ղեկավարի) որոշումով տեղակայման մշտական վայրը փոխվում է, որի մասին նախապես տեղեկացվում են ԱՌԿ խորհրդի անդամները:

## 3.Համայնքի սոցիալ -տնտեսական վիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն՝ 333 մլն.

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 34.1 (%)

Ծառայությունների բնագավառում համայնքի հիմնական ձեռնարկություններն են՝

Համայնքում առկա են մեծ, փոքր և միջին ձեռնարկատիրություններ, ուսումնական հաստատություններ և այլ կառույցներ: Չկան գործող արդյունաբերական ձեռնարկություններ, որտեղ բնակչությունը կունենա հիմնական աշխատանք, հացի խնդիրը լուծում են սեփականատերերի մոտ ունեցած սակավ աշխատանքով և ֆինանսական միջոցներով: Համայնքում գործում են սննդի 7 և առևտրի 36 կետեր:

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքներն են կարտոֆիլը, ցորենը, գարին, միսը, կաթը, բանջարաբոստանային կուլտուրաները, պտուղները, մեղրը, որոնց իրացման հիմնական շուկա է ՀՀ Լոռու մարզը:

Համայնքը աչքի է ընկնում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվածների մեծ քանակով: Համայնքում տարեց տարի զարգանում է տուրիզմը, քանի որ կլիման բարենպաստ է՝ ամռանը զով, ձմռանը՝ ցրտաշունչ:

Գյուլագարակում է գտնվում տարածաշրջանի համար կարևորագույն տուրիստական նշանակություն ունեցող <<Դենդրոպարկ>> բուսաբանական այգին:

- Գյուլագարակ բնակավայրում պահպանվել է 6-րդ դարի Տորմակադուռ միանավ եկեղեցին՝ իր հետաքրքիր կերտվածքով: Ունի վերանորոգման կարիգ, քանի որ կիսով չափ քանդվել է հարձակումների և երկրաշարժերի պատճառով, սակայն չի կորցրել իր հմայքը: Գյուղի կենտրոնում է Գյուլագարակի եկեղեցին, որի ծածկը

փլվել է 1988-ի երկրաշարժին: Գյուղազարակում է գտնվում հայտնի <<Սոճուտ դենդրոպարկը>>:

Կուրթան բնակավայրում է գտնվում 10-րդ դարի Հնեվանքի վանական համալիրը: Համալիրը կիսով չափ ավերված է: Կիսականգուն է մնացել նաև 6-7-րդ դդ Գետնանի եկեղեցին: Գյուղում գործում է թանգարան: Հայտնի է գյուղի ձորն իր բնությամբ:

Վարդաբլուրում կիսականգուն է 6-րդ դարի Ջգրաշենի եկեղեցին, Աշոտ երկաթի ամրությունը՝ լեռան գագաթին: Հայտնի են Վարդաբլուրի լճերը՝ իրենց գեղատեսիլ հմայքով:

Հոբարձիում կիսականգուն է 7-րդ դարի գյուղի եկեղեցին:

Գարգառը հայտնի է իր աշխարհագրական դիրքով և փարթամ բնությամբ:

Պուշկինոն հայտնի է որպես հիանալի ամառանոց, որ ամեն տարի հարյուրավոր հովեկների է ընդունում:

Ամրակիցում կանգուն է մնացել գյուղի ռուսական հնամենի եկեղեցին, որ հետաքրքրություն է առաջացնում հատկապես ռուս այցելուների շրջանում:

- դպրոցական, նախադպրոցական և արտադրպրոցական կրթական հաստատություններ,

Համայնքը աչքի է ընկնում կրթական բարձր մակարդակով: Համայնքում գործում է 7 միջնակարգ դպրոց, 6 մանկապարտեզ և 1 արվեստի դպրոց:

### 3.1 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում են իրականացնել ծրագրեր, որոնք համայնքի զարգացման խնդիրները կլուծեն հիմնովին՝

1) պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.
2) բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.
3) ապահովել համայնքի շինությունների պահպանումը, շահագործումը և բարեկարգումը.
4) նպաստել մշակույթի, մարզական և առողջապահական օջախների նորմալ գործունեությանը.
5) համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր՝ զարգացնելով փոքր և միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը.
6) հատուկ ուշադրություն դարձնել կրթության օջախների նորմալ գործունեությանը.

7) միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
8) բարձրացնել համայնքապետարանի աշխատակազմի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների կառավարման արդյունավետությունը:
9) ներհամայնքային ճանապարհների բարեկարգում տարիների ֆինասական վերլուծությունները և գալիք տարիների կանխատեսումները:

Մինչև սույն ծրագրի կազմման օրը 2022թ-ի ընթացքում համայնքը արդեն ներկայացրել է 3 ծրագրեր՝

1. Կուրթան և Վարդաբլուր բնակավայրերում մեկանարկ է տրվել մանկապարտեզիների հիմնանորոգման և կառուցման աշխատանքներին: Վարդաբլուրի մանկապարտեզի կառուցման համար նախատեսված է 153 մլն դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 46 մլն դրամ: Կուրթանի մանակապարտեզի շենքի հիմնանորոգման համար նախատեսված է 82 մլն դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 24 մլն ՀՀ դրամ:

2. Գյուլագարակ, Գարգառ , Պուշկինո և Ամրակից բնակավայրերում իրականացվել են գազաֆիկացման աշխատանքեր: Ծրագրի արժեքը կազմել է 107 մլն ՀՀ դրամ, համայնքի մասնաբաժինը՝ 48 մլն դրամ: Որի արդյունքում բնակչության 98% -ին հասանելի կլինի բնական գազ:

3.Գյուլագարակ բնակավայրում մեկնարկ է տվել Արվեստի դպրոցի շենքի կառուցմանը, որի համար նախատեսված է 75 մլն, համայնքի մասնաբաժինը ՝ 41 մլն ՀՀ դրամ:

## 3.2Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր

- համայնքի աշխարհագրական դիրքը
- պատմամշակութային հուշակոթողների հարուստ ժառանգությունն ու մշակութային հարուստ ավանդույթները
- Զբոսաշրջային կենտրոնների առկայությունը
- Գյուղատնտեսական նշանակության հողերի առկայությունը
- Համայնքում խմելու ջրի առկայությունը
- Համերաշխ և հյուրասեր բնակչություն

- Համայնքի գազամատակարարման , էլեկտրամատակարարման համակարգերի առկայությունը
- Բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետների առկայությունը
- Համայնքում հեռախոսակապի, ինտերնետ կապի և հեռուստատեսության առկայությունը
- Համայնքի գիշերային լուսավորության ցանցի առկայությունը
- Հակակարկտային կայանների առկայություն

Համայնքի թույլ կողմեր

- Ֆինսական միջոցների սղությունը,
- Գործազրկության բարձր մակարդակը , աշխատատեղերի պակասը
- Արտագաղթը
- Ծնելիության ցածր մակարդակը
- ժամանցի վայրերի բացակայություն
- Ներհամայնքային ճանապարհների վատ վիճակ,
- Գյուղմթերքների արտահանման դժվարություն,
- Սպառման շուկաների դժվար հասանելիություն,
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման համակարգերի բացակայություն ,
- Գյուղտեխնիկայի ոչ բավարար քանակ:
- Բնության պահպանություն, ծառահատումների մեծ քանակ

Հնարավորություններ

- Զբոսաշրջության զարգացումը
- Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը,
- Անասնապահության և դաշտավարության զարգացումը
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման,
- Գյուղ արտադրական ծավալների ավելացման հնարավորություն,
- Պետական, տեղական և միջազգային ծրագրերի հնարավորություն ,
- Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման լայն հնարավորություններ

Սպառնալիքներ

- Բնակչության արտագաղթ,
- Ծնելիության ցածր մակարդակ,
- Տնտեսական վիճակի վատթարացում,
- Անտառային տարածքների ոչնչացում,
- Անկանխատեսելի ոլորտային փոփոխություններ
- Բնակլիմայական պայմանների փոփխություն և ազդեցությունը շրջակա միջավայրի վրա
- Կախվածությունը ավանդական գյուղատնտեսությունից:

## 4.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 4.1 Համայնքի զարգացման տեսլական

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում կարևորվում է տեղական իշխանությունների , համայնքի բնակչության , գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Գյուլագարակ համայնքի առաքելությունն է ապահովել առողջ ու անվտանգ շրջակա միջավայր, որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և զբոսաշրջիկներին , ապահովել համայնքի բնականոն զարգացումը, Գյուլագարակը դարձնել բարեկեցիկ և մրցունակ ներդրումների համար:

*Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝*

1) Գյուլագարակ համայնքի տարածքային համաչափ , կայուն զարգացումը և պլանավորումը
2) աշխատատեղերի ընդլայնումը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկան ոլորտը, գյուղատնտեսությունը
3) Համայնքի բնակչության բնական աճ,
4) Ներհամայնքային ճանապարհների և փողոցների հարթեցում, ասֆալտապատում և տուֆով սալարկում

5) ջրհեռացման առուների վերականգնում և մաքրում,
6) ակտիվ մշակությանհին կյանքի կազմակերպում
7) Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային հողերի վարձակալությամբ տրամադրում՝ հասարակական և արտադրական կառույցների և առևտրի կետերի կառուցման համար,
8) Սպորտդպրոցի սպորտհրապարակների կառուցում և կահավորում՝ ֆիզիկական կուլտուրայի զարգացման համար
9) համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, նորոգում և շահագործում:
10) Համայնքում կարտոֆիլի և մրգերի պահեստավորման, տեսակավորման և վերամշակման հնարավորությունների ստեղծում,
11) Համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
12) Նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

4.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
2) Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում,
3) Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում.
4) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում
5) Համայնքի բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.
6) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.
7) Համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.

4.3 ՀՀԶԾ ֆինանսավորում

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերն ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն,
- Այլ աղբյուրներ:

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1.Կոմունալ ծառայություն
2.Գիշերային լուսավորություն
3.Ջուր Գարգառին և Պուշկինոյին
4. Ջրոսայզիների կառուցում
5.Համայնքի ճանապարհների բարեկարգում, սալարկում և ասֆալտապատում
6. Արվեստի դպրոցի կառուցում, Մշակույթի տների վերանորոգում և կառուցում
7 .Եկեղեցիների վերանորոգում
8 .Սպորտդպրոցի և սպորտհրապարակների կառուցում
9.Արոտավայրերի  բարելավում և անասնապահության խթանում
10.Գյուղատնտեսություն
11. Մանկապարտեզների կառուցում և վերանորոգում
12.Գարգառ գետի Էկոհամակարգի վերականգնում

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

### «Գյուղագարակ համայնքի կոմունալ ծառայություն»

(Ծրագրի անվանում)

| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Աղբահանության կազմակերպում տեսակավորման միջոցով | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անմիջական նպատակ | Համայնքաբնակների եկամուտների աճի ապահովում | | | | | | |
| | Ցուցանիշներ (%) | Ելակետային Արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2023 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| | | 0 | 50 | 60 | 70 | 85 | 100 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Կոմունալ ծառայության բարելավում և զարգացում | | | | | | |
| | Ցուցանիշներ(%) | Ելակետային Արժեք | Թիրախային արժեքներ | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **2023** | **2023** | **2024** | **2025** | **2026** | **2027** |
